

ՎԱՐԴԱՆ ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

«ՀԱՅԿՈ» ԹԱԼԷԱԹԻ ԱՀԱՔԵԿՈՒՄԻՆ ՎԵՐՋԻՆ ԱՆԾԱՆՈԹ ՄԱՍՆԱԿԻՅԸ

1920-1922 թուականներուն Հ. Յ. Դաշնակցութեան կողմէ ձեռնարկուած «Նեմեսիս» գործողութեան կեդրոնական դրուագը՝ Թալէաթ փաշայի սպանութիւնը, համեմատաբար լայն անդրադարձի արժանացած է: Այսուհանդերձ, ան կը կարօտի լրացուցիչ հետազոտութեան, ինչպէս եւ ամբողջ գործողութիւնը ընդհանրապէս: Սոյն յօդուածը կը միտի լուսաբանել Սողոմոն Թեհլիրեանի գործակիցներէն Հայկոյի ինքնութիւնը:

Արդարեւ, չորս անձեր կեղծանունով ներկայացուած են Թեհլիրեանի յուշերուն մէջ՝ Հրափ, Յազօր, Վազա եւ Հայկօ: Անոնք ուղղակի կրակի գիծին վրայ եղած են. մինչ Հրափը «խլուրդ»ի դիրքը ստանձնած էր Պերլինի թրքական շրջանակներու մէջ, միւս երեքը Դեկտեմբեր 1920 - Մարտ 1921-ին Թալէաթը բացայայտող հետաքննութիւնը կատարած են Թեհլիրեանի հետ: Կեղծանունները որդեգրուած էին ապահովութեան նկատառումներով. Գործակիցները ողջ էին, կամ վրիժառուն այդպէս կը կարծէր, յուշերու գրառումի թուականին՝ 1944-էն առաջ: Արդարեւ, Յազօր մահացած է 1942-ին, Հայկօ՝ 1957-ին, Հրափ՝ 1960-ին, իսկ Վազա՝ 1980-ին:

Լինտի Վ. Աւագեան՝ ահաբեկումին առաջին անգլերէն պատումին հեղինակը (1965), որ հիմնուած է Թեհլիրեանի յուշերուն վրայ, որեւէ յայտնութիւն չէ կատարած, բայց Հայկոյի անունը սխալմամբ գրած է Hago¹: Նոյն տարին, Արշաւիր Շիրակեանի յուշերը բացայայտած էին սուրիական հորհրդարանի եւ Հ. Յ. Դաշնակցութեան Բիւրոյի երբեմնի անդամ Հրաչ Փափագեանի (1892-1960) եւ Հրափի նոյնութիւնը²: Շիրակեանի երկին անգլերէն թարգմանութենէն այս նոյնացումը³ հաւանաբար ժազ Տըռոփի անցած է, որ, սակայն, ենթադրութիւն չէ ըրած միւս կեղծանուններուն մասին եւ նոյնիսկ երկու հատը սխալ արտագրած է Vazan եւ Hago⁴: Առանց յիշելու Հայկոն, Հրաչ Տասնապետեան 1988-ին նշած է, որ Յազօրը եւ Վազան կը թուէին ըլլալ Յ. Զօրեանը եւ Վահան Զաքարեանը, աւելցնելով Շահան Նաթալիի, Հրաչ Փափագեանի եւ Լիպարիտ Նա-

¹ Lindy V. Avakian, *The Cross and the Crescent*, Los Angeles, 1965, էջ 121-124:

² Արշաւիր Շիրակեան, *Կտակն էր նահատակներուն*, Պէյրութ, 1965, էջ 205:

³ Arshavir Shiragian, *The Legacy: Memoirs of an Armenian Patriot*, translated by Sonia Shiragian, Boston, 1976, էջ 120-121:

⁴ Jacques Derogy, *Operation Némésis*, Paris, 1986, էջ 133-144:

զարեանցի անունները որպէս ահաբեկումին մասնակիցներ⁵: Կլարա Թերզեան, բոլորովին անկախաբար, հիմնուելով Շահան Նաթալիի, Պետրոս Յովհաննիսեանի եւ Լուսիկ Մելիք-Օհանջանեանի բանաւոր վկայութիւններուն վրայ, 1989-ին հրապարակած է ստալինեան բռնաճնշումներու զոհ պատմաբան Յակոբ Զօրեանի (1894-1942) Թեհլիրեանի գործակից եղած ըլլալը⁶, իսկ երկու տարի ետք արձագանգած՝ Տասնապետեանի վերոյիշեալ նշումներուն⁷: Առանց տեսած ըլլալու Տասնապետեանի հատորը, էտուրրա Ալեքսանտր 1991-ին նոյնացուցած է Յագօրն ու Յ. Զօրեանը՝ հիմնուելով Արմին Վեկների 1927-ի հայաստանեան ուղեգրութեան վրայ, եւ ենթադրած, որ Հրափը կրնար նոյնանալ Հրաչ Փափազեանին, իսկ Վազան՝ Թեհլիրեանի դատաւարութեան թարգմանիչներէն Վահան Զաքարեանցի հետ: Ալեքսանտր յիշած է Հայկոն, պարզապէս հետեւելով Թեհլիրեանի պատումին, առանց որեւէ վարկած առաջարկելու⁸:

Ինչպէս կը տեսնենք, հազուադէպ յիշատակումներէ անդին, Հայկոյի կերպարը մնացած է ստուերի մէջ⁹, իսկ ինքնութեան հարցը՝ հետազօտողներու տեսադաշտէն դուրս:

Թեհլիրեան Պերլին հասած է Դեկտեմբեր 1920-ի սկիզբին: Քանի մը օրուան

⁵ **Hratch Dasnabedian**, *History of the Armenian Revolutionary Federation Dashnaktsututian 1890/1924*, translated by Bryan Fleming and Vahe Habeshian, Milan, 1990, էջ 157 (հայերէն բնագիրը լոյս տեսած է 1988ին): Այս ենթադրութիւնը արդէն որպէս փաստուած իրողութիւն յիշուած է յետագայ այլ հրատարակութիւններու մէջ (հմմտ. *Յուշամատեան Հայ Յեղափոխական Դաշնակցութեան. Ալպոմ-Ատլաս 1914-1925*, Բ. հատոր, Լոս Անճելէս, 2001, էջ 214, **Ռոմիկ Յովնանեան**, «Նեմեսիս» գործողութեան մէջ, եր., 2013, էջ 33):

⁶ **Կլարա Թերզեան**, «Հին ու նոր օրերի հետ», *Վերածնունդ Հայաստան*, 3, 1989, էջ 20-23:

⁷ **Կլարա Թերզեան**, «Ուլֆը Էին Թեհլիրեանի կողմին», *Ազատամարտ*, 19-26 Դեկտեմբեր 1991: Հմմտ. **Aram P. Aivazian**, *Armenia: Usurped by Genocide and Treachery*, Montreal, 1992, էջ 23: Զօրեանի մասին, տե՛ս նաեւ **Մերի Քեշիշեան**, «Նեմեսիսի զինուորը՝ Յակոբ Զօրեան», *Հայ գիտութիւն*, 23-29 Մայիս, 2013:

⁸ **Edward Alexander**, *A Crime of Vengeance: An Armenian Struggle for Justice*, New York, 1991, p. 51-53: 2012ի իր մագիստրոսական աւարտանադին մէջ, Օսիկ Մոսէս հետեւած է Ալեքսանտրի նոյնացումներուն (վկայակոչելով նաեւ Տասնապետեանը), բայց սխալմամբ ըսած է, անտեսելով Հայկոն, թէ Թեհլիրեան յիշած է իր գործակիցներէն երեքը (**Osik Moses**, «The Assassination of Talaat Pascha in 1921 in Berlin a Case Study of Judicial Practices in the Weimar Republic», M.A. thesis in History, California State University, Northridge, 2012, pp. 25-26):

⁹ 2012-ին, «Նեմեսիս» գործողութեան 90-ամեակի պէջրութեան ոգեկոչումին, գլխաւոր բանախօսը՝ իրաւանեան Խորհրդարանի երեսփոխան Յակոբ Բագրատունի, նշած է, թէ Մեծ եղեռնի զոհ մայրերուն «գաւակներն էին՝ Հրաչ Փափազեան, Լիպարիտ Նազարեանց, Շահան Նաթալի, Վահան Զաքարեան, Մերճանօֆ, Յագօր, Յարութիւն Յարութիւնեան, Երուսմը Յմարժեան եւ Արշակ Մուշեղեան, որոնք ծրագրեցին ու պատրաստեցին ոճրագործներուն ահաբեկումը» («Նեմեսիս»-ի գործողութեան 90-ամեակին նուիրուած ձեռնարկին երեսփոխան Յակոբ Բագրատունիի արտասանած խօսքը», *Ազգակ*, 30 Մարտ 2012): Նկատելի է, որ Յակոբ Զօրեանը միայն յիշուած է իր կեղծանունով, իսկ «Հայկո»ն ընդհանրապէս բացակայ է երեսփոխան ամբողջական այս թուարկումէն:

հետաքննութենէ ետք, «ներս մտաւ Յազորը երկու նոր ընկերների հետ: Դրանցից մէկը Վազան՝ միջինից քիչ բարձր, նիհարակազմ մի երիտասարդ էր, սեփսեւ մազերը խնամքով յետ սանտրած, խօսում էր ծանր, հանդարտ, առանց աւելորդաբանութիւնների, ժուժկալ նախադասութիւններով: Դէմքը խոհուն արտայայտութիւն էր, մանաւանդ խելօք աչքերը: Միւսը՝ Հայկոն ուսանող էր. ձուլածէ, համակրելի դէմքի փայլն էր սիրուն ժպիտը, զուսպ արտաքինի տակ ծածկուած էր պայծառ, մաքուր ու զարմանալիօրէն ընկերասէր հոգի: Երկուսն էլ իրազեկ էին խնդրին»¹⁰:

Երկու ամսուան հետաքննական տքնաջան աշխատանքը տակաւին չէր յաջողած Թալէաթի հետքը բացայայտել Պերլինի մէջ, երբ «նոր մարդ» մը կը յայտնուէր Փետրուար 1921-ի վերջերուն, որ, Թեհրեանի համոզումով, իր փնտռած թիրախը պէտք է ըլլար: Երկար վիճաբանութեան ընթացքին, Հայկօ առաջարկած է Հարթենպէրկ փողոցի բնակիչներուն ինքնութիւնը պարզել՝ Թաղամասի գրանցման բաժնին դիմելով: Այդ առիթով, Վազա տուած է իր գործընկերոջ հակիրճ բնորոշումը. «Հայկոն թէեւ խառնուածքով բանաստեղծ է, բայց խօսում է գիտնականի պէս»¹¹: Ինչպէս յայտնի է Թեհրեանի յուշերէն, Յազորը, Վազան եւ Հայկոն շարունակած են իրենց գործակցութիւնը մինչեւ Թալէաթի ահաբեկումը՝ 15 Մարտ 1921-ին:

1919-1934-ին Աւետիք Իսահակեան եօթը նամակներ գրած է Վահան Զաքարեանին, որուն, ինչպէս եւ նամակներէն չորսին մէջ յիշուած Հայկին ինքնութիւնը անձանօթ մնացած է բանաստեղծին նամականիին հրատարակիչներուն: 1919-ի վերջերուն, «Հայկ»-ը պարտադրուած էր մեկնիլ Հանրապետութեան Պատուիրակութեան կեդրոնը՝ Փարիզ: Ժընեւէն ուղղուած Նոյեմբեր 26, 1919-ի նամակին մէջ, Իսահակեանը նշած է «Բերլինում պարապ քաշ գալով, աննպատակ երեք ամիս, չյաջողած միսիոնովս, եւ Հայկի շուրջը կատարուած անախորժ պատմութիւնով»¹², եւ, առանց լուսաբանելու այս խորհրդաւոր տողը,

¹⁰ Սողոմոն Թեհրեան, *Վերջիշումներ*, Գանիրէ, 1953, էջ 260-262:

¹¹ Տե՛ս նոյն տեղը, էջ 282-283:

¹² Յայտնի չէ, թէ Իսահակեան ի՞նչ առաւելութեամբ Պերլին գացած է: Սակայն, կրնայ կապ ունենալ նոյն նամակին մէջ յիշուած այն փաստին հետ, որ «Բերլինի զագանը, հրէշ մի քանի օրով եկած է եղել Զիցցերիա. մինչեւ իմացանք, արդէն վերադարձել էր նորից Բերլին. (...) նոյն անունով էր եկել, ինչ որ ունէր Բերլին» (Գրականութեան եւ Արուեստի Թանգարան (ԳԱԹ), Աւետիք Իսահակեանի ֆոնտ, I բաժին, թ. 225: Տե՛ս նաեւ Աւետիք Իսահակեան, *Երկերի ժողովածու*, հատոր 6, եր., 1979, էջ 174-175): Հնարատը է, որ խօսքը Թալէաթի մասին է. Հոկտեմբեր 1919-ին կը տեղեկագրէր, թէ զուիցցերիական իշխանութիւնները մերժած էին Թալէաթի ու Ճեմալի մուտքը՝ Լօզան երթալու նպատակով. մինչ ճախտ արդէն ազդարարուած էր Զուիցցերիան ձգելու մասին, իսկ Իսմայիլ Հազգը արդէն լքած էր երկիրը. մերժած էին. «Բոլոր այս անցանկալիները պիտի կեդրոնանան Գերմանիոյ մէջ, եւ պիտի բաւականանա դրամ եւ հրահանգներ դրկելով իրենց ներկայացուցիչներուն մեր երկրին մէջ» («Nos indésirables», *Gazette de Lausanne*, 7 octobre 1919):

աւելցուցած. «Գալով Հայկին, նա Փարիզում արդարացրել էր իրեն, եւ կարծեմ չի ուզում Բերլին դառնալ. լսեցի, որ պահանջում են, որ դր. Գրենֆիլդը փաստական մեղադրանքը ուղարկի Փարիզ»¹³:

Իսահակեանի յաջորդ՝ Դեկտեմբեր 30, 1919-ի նամակը, պարզած է իր անվստահութիւնը Հայկի նկատմամբ¹⁴, թէեւ մանրամասնութիւնները չէ լուսաբանած. «Ինչքան էլ որ այդտեղ փորձեր կատարուեն Հայկին արդարացնելու Կիւնտզովի գործին մէջ, ես համոզւած եմ նրա շանտաժի մէջ, եւ համոզմունքս չեմ կարող փոխել. ես ո՛չ տիկ. Կիւնտզովի պէս շանսօնէտկայ եմ եղել Բագուի կաֆէշանտանում, եւ ոչ էլ Գրենֆիլդի պէս վախկոտ, զգոյշ, խորամանկ, կեղծաւոր»¹⁵:

Սակայն, Իսահակեանի կասկածները չեն հիմնաւորուած. Հայկը յաջողած է լուսաբանել հարցը եւ վերադառնալ Պերլին: Այլապէս, 1920-1921-ին ան «Նեմեսիս» գործողութեան մասնակից պիտի չդառնար՝ «Հայկօ» կեղծանունով: Հայաստանի առաջին Հանրապետութեան Պոստոնի արխիւը քննած հազուագիւտ գիտնականներէն մէկուն՝ Ռիչըրտ Յովհաննէսեանի շնորհիւ գիտենք, որ ՀՀ Պերլինի ներկայացուցիչ գոկտ. Զէյմա Գրինֆիլդն (1873-1939)¹⁶ ու իր օգնականը՝ Հայկ Տէր-Օհանեան, 1919-ին աշխատած են հայ ռազմագերիները յայտնաբերել եւ անոնցմէ հազարեակ մը Հայաստան վերադարձը ապահովել՝ գերմանական կառավարութեան ծախսով: Տէր-Օհանեանի դէմ եղած վերոյիշեալ մեղադրանքներուն չհիմնաւորուած բնոյթին որպէս լրացուցիչ փաստարկ պէտք է մատնանշել, որ, այլապէս, 1920-ին ան պիտի չդառնար Հանրապետութեան ներկայացուցչութեան մամուլի գրասենեակի վարիչը, Զաքարեանի կողքին, որ տնտեսական խորհրդական էր¹⁷:

¹³ ԳԱԹ, Ա. Իսահակեանի ֆոնտ, I բաժին, ք. 225: Տե՛ս **Իսահակեան**, *Երկերի ժողովածու*, էջ 175:

¹⁴ Ան մերժած է դրամ ուղարկել «մեր ծանօթ գործին» համար, «որովհետեւ Հայկի վրայ ո՛չ մի վստահութիւն չունեմ, իսկ դու մենակ չես կարող բան անել» (ԳԱԹ, Ա. Իսահակեանի ֆոնտ, I բաժին, 224. տե՛ս նաեւ Իսահակեան, *Երկերի ժողովածու*, էջ 177):

¹⁵ ԳԱԹ, Ա. Իսահակեանի ֆոնտ, I բաժին, ք. 224 (տե՛ս նաեւ **Իսահակեան**, *Երկերի ժողովածու*, էջ 177): Տիկ. Կիւնտզովը հաւանաբար կիմն էր Պաֆուի ֆարիտի մեծատուններէն Ստեփան Կիւնտզովի՝ «ոռասական Ռոքֆելլերը» (**John Reed**, *Ten Days that Shook the World*, New York, 1919, էջ 7), որ 1919-ին զօրավար Նիֆոլայ Եուտենիչի ստեղծած հակաբոլշեւիկեան կարճատեւ «Հիւսիսարեւմտեան Կառավարութեան» գլուխը կը գտնուէր (**Igor S. Zonn, Andrei Kostianoy, Aleksey Kosarev, and Michael Glantz**, *The Caspian Sea Encyclopedia*, New York and Heidelberg, 2010, էջ 272):

¹⁶ Գրինֆիլդը իրաւագիտութեան դոկտոր Թիւպինգէնի համալսարանէն (Գերմանիա), գերմանացի հօր եւ թաւրիզահայ մօր զաւակ էր: Անոր մասին, տե՛ս **Գրիգոր Եպս. Զիֆթեան**, «Բարեգործ Այգէլ Գրինֆիլդի ծոռը ցանկանում է այցի գալ իր պապի շիրմին»՝ Մարալանի այգում», *Ալիք*, 4 Սեպտեմբեր 2014:

¹⁷ **Richard G. Hovannisian**, *The Republic of Armenia*, vol. III: From London to Sèvres, February-August 1920, Berkeley-Los Angeles-London, 1996, էջ 386-387:

Մեր նույնացումը կը հիմնադրուի նաեւ այն իրողութեամբ, որ ցարդ վերածանուած երեք կեղծանունները կազմուած են անուններու ու մականուններու սկզբնատառերու կցումով՝ Հրա-փ, Յա-զօր, Վա-զա: Տրամաբանական է, որ նոյն սկզբունքը պահպանուած ըլլայ «Հայկո»-յի պարագային, փոխանակ փաղաքական ձեւ մը (հմմտ. «Պերճօ», «Սերժօ») որդեգրուած ըլլալու: Ամենէն հաւանական տարբերակը Հայկ-օէ, իսկ ամենահաւանական թեկնածուն՝ Հ. Տէր-Օհանեանը:

Վահան Զաքարեան (Թաւրիզ, 1883 - Պերլին, 1980) ու Հայկ Տէր-Օհանեան ծնունդով պարսկահայ էին ու տարեկից, պարսկական յեղափոխութեան ժամանակակիցներ¹⁸, մօտաւորապէս միեւնոյն ատեն Իրանը ձգած եւ այնուհետեւ՝ Պերլին եկած,¹⁹ ուր կ'աշխատէին միեւնոյն վայրին մէջ: Այս բոլորը կ'ենթադրէ որ չմիայն կուսակցական բնոյթի, այլ նաեւ՝ անձնական ընկերական յարաբերութիւններ: Ահա թէ ինչու անոնք միասնաբար Թեհրանին ներկայացուած են Յակոբ Զօրեանի կողմէ:

Հայկ Տէր-Օհանեան ծնած է Ռաշտ, Պարսկաստան, 10 նոյեմբեր 1883-ին²⁰: Հայրը՝ Աստուածատուր Տէր Յովհաննէս (աւելի ուշ՝ Ասատուր Տէր Օհանեան) բարեկեցիկ դիրք ունէր եւ տեղւոյն Ս. Մեսրոպ հայկական եկեղեցւոյ հոգաբարձութեան երկարամեայ հաշուապահն էր: Եկեղեցւոյ շինութեան (շինուած՝ 1888-ին ու հրոյ ճարակ՝ 1920-ին) անհրաժեշտ գումարին մօտ տասը առ հարիւր փոխ տուած էր, ու այդ գումարին կէսը նուիրած էր 1891-ին²¹: Ան իր զաւակը Պաքու զրկած է՝ ռուսական գիմնազիայի մէջ ուսումը շարունակելու:

1902-ի վերջերուն կամ 1903-ի սկիզբին կայացած հայ աշակերտութեան համաժողովին խմբուած 30-40 պատուիրակները ընտրած են աշակերտական խորհուրդ մը, մեծաւ մասամբ՝ Դաշնակցութեան ազդեցութեան տակ, որուն անդամներէն մէկը Հ. Տէր-Օհանեանն էր: Կուսակցութեան կազմակերպած աշա-

¹⁸ Զաքարեանց Ատրպատականի կողմէ ներկայացուցիչ էր Հ. Յ. Դաշնակցութեան Դ. (1907) եւ Ե. Ընդհանուր Ժողովներուն (1910) (Անդրէ Ամուրեան (խմբ.), Հ. Յ. Դաշնակցութիւն – Եփրեմ – Պարսկական Սահմանադրութիւն, Ա. հատոր, Թեհրան, 1976, էջ 1 եւ 263):

¹⁹ Զաքարեան Գերմանա-Հայկական Ընկերութեան հիմնադիր անդամներէն մէկը եղած է Յունիս 1914-ին: Ա. Աշխարհամարտի սկիզբէն Պերլինի պարսկական հիւպատոսարանի պաշտօնէյ էր (Թեհրան արգարահատոյցը, Պէյրութ, 1981, էջ 153):

²⁰ «Հոգիւրիք», տե՛ս Կարօ Գեորգեան, Ամենուն տարեգիրքը, Պէյրութ, 1959, էջ 590: Ըստ ուրիշ մահախօսականի մը, ծնած է Թաւրիզ («Հայկ Օհանեան», Յառաջ, 6 նոյեմբեր 1957): Յիւրիիսի համալսարանի տուեալներով, ծնած է Թաւրիզ, 6 Օգոստոս 1882-ին («Matrikel-edition der Universität Zürich, 1833-1924», www.matrikel.uzh.ch/pages/753.htm, ընթերցուած՝ 16 Հոկտեմբեր 2009-ին): Սակայն, Ատրպատականի հայոց թեմի առաջնորդարանը (Թաւրիզ) անոր ծննդեան արձանագրութիւն չունի (Գրիգոր Եպս. Զիթֆեմեան, իմակ, 7 Փետրուար 2014):

²¹ Ա. Մաքսապետեան, «Հայերը Գիլանի մէջ եւ Ռաշտի հայոց եկեղեցին», Հայրենիք, Փետրուար, 1940, էջ 114-120:

կերտական խումբերուն մաս կը կազմէր նաեւ 15-16 տարեկան Սոֆիա Փիրբու-դաղեանը²²։ Անոնք հանդիպած ու, հաւանաբար 1903-ին կամ 1904-ին, նշանուած են։ Շրջանաւարտ ըլլալէ ետք, 1903-ի ամրան Տէր Օհանեան մեկնած է Եւրոպա ուսումը շարունակելու, նախ՝ Ֆրիպուրկի համալսարանը (Գերմանիա), ապա՝ Յիւրիխի համալսարանի (Զուիցերիա) փիլիսոփայութեան, պատմութեան եւ գրականութեան դպրոցը, զոր լքած է Յունիս 1905-ին²³։

Մինչ այդ, Տէր Օհանեանի նշանածը հազիւ ազատած էր Փետրուար 1905-ի Պաքուի թաթարական ջարդերէն²⁴։ Նոյն տարին, անոնք ամուսնացած են ու Ռաշտ փոխադրուած, բայց ամուսնութիւնը հազիւ քանի մը ամիս տեւած է։ Բաժնումին ամենէն հաւանական պատճառը տողընդմէջ գրուած է Սոֆիայի կողմէ. նորապսակ ամուսինը՝ հակառակ զայն սիրելուն, լքած է՝ «Թուրքիոյ սահմանը» երթալու, որովհետեւ չբացայայտուած, «սրբազան առաքելութիւն մը» ունէր կատարելիք²⁵։ Արդարեւ, Հայկ Տէր Օհանեան Պարսկաստանէն դէպի Կովկաս գէնքերու գաղտնի փոխադրութեան ղեկավարներէն մէկը եղած է, 1906-1907-ի հայ-թաթարական կռիւներուն ընթացքին²⁶։

Մինչ այդ, Սոֆիա Տէր Օհանեան վերադարձած էր Կովկաս եւ Օգոստոս 1906-ին ծնունդ տուած իրենց աղջկան՝ Նորային, Կիսլովոդսկի մէջ²⁷։ 1906-1908-ին ան խաղացած է Պաքուի հայ բեմին վրայ եւ ապա Մոսկուա մեկնած՝ թատրոն ուսանելու նպատակով, սակայն հոն գտած է իր բուն կոչումը՝ պարը։ 1909ին դարձած է արեւելեան, գլխաւորաբար՝ պարսկական պարի մեկնաբան, եւ աւելի քան 40 տարի Արմէն Օհանեան բեմական անունով իր արուեստը տարած է Միջին Արեւելքէն մինչեւ Եւրոպա ու Հիւսիսային Ամերիկա՝ համբաւաւոր անունը մը դառնալով 1910-1920-ական թուականներուն²⁸։

Դաշնակցութեան Դ. Ընդհանուր Ժողովին (Վիեննա, Փետրուար-Մայիս 1907), յաջորդած է «երիտասարդ դաշնակցականներ»-ուն անջատումը եւ ռուսական Սոցիալ-Յեղափոխական կուսակցութեան հայկական ճիւղին հիմնումը Յունիս 1907-ին։ Ըստ Պաքուի դաշնակցական ղեկավարներէն Աբրահամ Գիւլ-խանդանեանի, «անշատական» խումբին հետ թէժ բանավէճերուն Հայկ Տէր Օհանեանը աշխոյժ մասնակցութիւն ունեցած է²⁹։

²² Ա. Գիւլիանդանեան, «Բագով դերը մեր ազատագրական շարժման մէջ», Հայրենիք, Յունիս, 1924, էջ 117, որ սխալմամբ գրած է «Շահբուդաղեան»։

²³ «Matrikelektion der Universität Zürich»։

²⁴ Տե՛ս Armen Ohanian, *The Dancer of Shamahka*, New York, 1923, էջ 82-83։

²⁵ Նոյն տեղը, էջ 125-130։

²⁶ Եղուարդ Փափազեան, «Թժ. Հայկ Տէր Օհանեան մեռած», *Յուսաբեր*, 11 նոյեմբեր, 1957։

²⁷ Carlos Antaramian Salas, *Del Ararat al Popocatepetl*, Mexico City, 2011, էջ 182։

²⁸ Իր մասին, տե՛ս Արծուի Բախչինեան եւ Վարդան Մաաթէոսեան, *Շամախեցի պարուհին*։

Արմէն Օհանեանի կեանքը եւ գործը, Եր., 2007։

²⁹ Գիւլիանդանեան, «Բագով դերը», էջ 117։

1905-1911-ի սահմանադրական շարժումին, Պարսկաստան ժամանած բազմազգ յեղափոխականներուն մաս կազմած էր պուլկարացի սոցիալ-դեմոկրատ Ֆէոդոր Պանովը որպէս Պետերբուրգի «Ռեչ» օրաթերթի թղթակից: Ան Յունիս-Դեկտեմբեր 1908-ին թղթակցութիւններ հրատարակած է (նաեւ՝ «Ռուսկոյէ Սլովո» օրաթերթին մէջ)՝ խեղաթիւրելով պատկերը յօգուտ սեփական անձի փառաբանումին³⁰: Գիւլիսանդանեանի հրահանգով, Տէր Օհանեան 1908-1911-ին Պարսկաստան վերադարձած է որպէս «Ռուսկոյէ Սլովո»-յի թղթակից՝ յեղափոխական շարժումին ղեկավարներէն եփրեմ խան Դաւթեանի գործունէութիւնը աւելի առարկայօրէն լուսաբանելու համար³¹: Յունուար 1909-ին արդէն արձանագրուած է Պարսկաստան ըլլալը, ուր եփրեմի գործակիցներէն մէկը դարձած էր³²: Ըստ երեւոյթին, կուսակցութեան հիմնական նպատակը Պանովի (Դաշնակցութեան նախկին անդամ Ռաշիտ կեղծանունով, թերեւս 1899-1902-ի մակեդոնական ապստամբութեան ժամանակ) խնդրաշարոյց քարոզչութեան հակազդել էր³³: Պանով իր գործունէութիւնը շարունակած է մինչեւ 1909-ի գարունը³⁴:

Տէր Օհանեան, որ նոյնպէս «Ռեչ»-ի եւ յառաջդիմական «Ուտրօ Ռոսի»-ի թղթակից էր³⁵, Փետրուար 1911-ին եփրեմի հիւանդ կնոջ՝ Անահիտ Դաւթեանին ընկերացած է Գերմանիա, ապա վերադառնալով Պարսկաստան³⁶: Զօրավիգ կանգնելով 1909-ին գահընկէց Մոհամէտ Ալի շահի հակայեղափոխական շարժումին, ռուսական կառավարութիւնը Դաշնակցութեան դէմ 1909-1912 շրջանի հալածանքը տարածած է Պարսկաստան: Ռաշիտ ռուս հիւպատոսը Սեպտեմբեր 1911-ին ձերբակալած է Տէր Օհանեանը՝ ռուսական օրաթերթերուն տուած ճշգրիտ լրատուութեան պատճառով: Ութը օր ետք, սակայն, ան ազատ արձակուած է՝ կուսակցական պատկանելիութիւնը անապացոյց մնացած ըլլալով, ու որոշած՝ եւրոպա մեկնիլ, երկրի անշնչելի դարձած մթնոլորտին պատճառով³⁷:

³⁰ Տե՛ս J. M. Hone and Page L. Dickinson, *Persia in Revolution with Notes of Travel in the Caucasus*, London-Dublin, 1910, էջ 124-125. Edward G. Browne, *The Persian Revolution of 1905-1909*, Cambridge, 1910, էջ 213-221. Mansour G. Bonakdarian, *Britain and the Iranian Constitutional Revolution, 1906-1911*, Syracuse, 2006, էջ 186:

³¹ Գիւլիսանդանեան, «Քաղաքի դերը», էջ 117:

³² «Հոդվածի», էջ 590. Ամուրեան, Հ. Յ. Դաշնակցութիւն, էջ 67:

³³ Գիւլիսանդանեան, «Քաղաքի դերը», էջ 117:

³⁴ Տե՛ս Browne, *The Persian Revolution*, էջ 221-228. Janet Afary, *The Iranian Constitutional Revolution, 1906-1911: Grassroots Democracy, Social Democracy, and the Origins of Feminism*, New York, 1996, էջ 241:

³⁵ Ամուրեան, Հ. Յ. Դաշնակցութիւն, էջ 269:

³⁶ Նոյն տեղը, էջ 479:

³⁷ «Վերջին տարւայ ճակատամարտը եւ “Դաշնակցութեան” մասնակցութիւնը».- Դրօշակ, Յունուար 1912, էջ 28: Տե՛ս նաեւ Ամուրեան, Հ. Յ. Դաշնակցութիւն, էջ 117:

Եւրոպական անորոշ վայրէ մը (հաւանաբար՝ Գերմանիոյ մէջ), Տէր Օհանեան եփրեմին գրած էիր կնոջ առողջական վիճակին մասին, աւելցնելով, որ ապահովութեան նկատառումներով ան նոր սկսած էր դուրս գալ իր թաքստոցէն: Անթուակիր նամակը պէտք է գրուած ըլլայ 5 Մայիս 1912-էն՝ եփրեմի մահուան թուականէն առաջ³⁸: Ապրիլ 1912-ին Տէր Օհանեան ուսումնառութեան վկայագիր կը ստանար Յիւրիխի համալսարանէն³⁹: Կ'ենթադրենք, որ այս ժամանակ Պերլինի համալսարանի բժշկական ճիւղը մտած է:

1912-1919-ին որեւէ տեղեկութիւն չկայ Տէր Օհանեանի մասին, որ կը թուի հանրային գործունէութենէ հեռու մնացած ըլլալ: Այստեղ պէտք է ճշգրտել Ռիչըրտ Յովհաննէսեանի աշխատութեան այն տեղեկութիւնը, թէ 1917-1918-ին Թիֆլիսի եւ Պաքուի Հայ Ազգային Խորհուրդներու անդամ եղած է՝ սոցիալ-յեղափոխականներու կողմէ⁴⁰, իսկ Ապրիլ 1919-ին քաղաքական առաքելութեամբ Ղարաբաղ ղրկուած է Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան կողմէ⁴¹: Սակայն, պէտք է բացառել Հայկ Տէր Օհանեանի՝ կուսակցական «նոր» ինքնութեամբ ներկայութիւնը Կովկասի մէջ, ինչպէս եւ իրարու ժամանակակից համանուն անձերու գոյութիւնը: Արդարեւ, Սիմոն Վրացեան յիշած է Յ. Տէր Օհանեանը վերոյիշեալ Ազգ. Խորհուրդներու անդամներու ցանկին մէջ⁴², իսկ Աբրահամ Գիւլիանդանեան վկայած է, որ անջատական շարժումին, ապա՝ սոցիալ-յեղափոխականներու հայկական ճիւղի կարեւոր դէմքերէն մէկն էր Իրաւաբան Յովհաննէս (Վանիա) Տէր Օհանեանը⁴³:

Այնուհետեւ, Վ. Զաքարեանը Թեհլիրեանի դատաւարութեան մասնակցած է որպէս թարգմանիչ ու վկայ Յունիս 1921-ին եւ դեր ունեցած է դատաւարութեան սղագրուած տարբերակին առանձին գիրքով հրատարակութեան մէջ՝ նոյն տարուան ընթացքին⁴⁴: Ըստ երեւոյթին, միաժամանակ Տէր Օհանեանը աւարտած է իր բժշկական ուսումը: 1919-ի նամակներէն բոլորովին տարբեր հնչերանգով, Յ. Նոյեմբեր 1921-ին Իսահակեան Վենետիկէն հարցուցած է Զաքարեանին. «Հայկը ի՞նչ է անում, քննութիւն տւեց, թէ՛ ոչ (...):» Ու ապա յայտնած է. «Ջերմ բարեւներ Գրենֆիլդին, Լիբարիտին [sic], Աշոտին, Հայկին եւ

³⁸ Ամուրեան, Հ. Յ. Դաշնակցութիւն, էջ 268-269:

³⁹ «Matrikelektion der Universität Zürich».

⁴⁰ Richard Hovannisian, *Armenia on the Road to Independence*, Los Angeles-Berkeley-London, 1967, էջ 90 (հմմտ. նաեւ Anahide Ter Minassian, *La République d'Arménie 1918-1920*, Bruxelles, 1989, էջ 34):

⁴¹ Richard G. Hovannisian, *The Republic of Armenia*, vol. I, Los Angeles, Berkeley, and London: University of California Press, 1971, էջ 174:

⁴² Տէս Սիմոն Վրացեան, Հայաստանի Հանրապետութիւն, Բ. տպագրութիւն, Պէրուք, 1958, էջ 47 եւ 157:

⁴³ Գիւլիանդանեան, «Բագուի դերը», էջ 116-117:

⁴⁴ Տէս Հ. Յ. Գ. Արտասահմանի Պատասխանատու Մարմնի նամակը Վահան Զաքարեանին, 30 Յունիս 1921 (Թեհլիրեան արդարահատոյցը, էջ 418):

բողորին»⁴⁵։ Սակայն, Տէր Օհանեանի բժշկական գործունէութեան մասին ոչինչ յայտնի է։

Հոկտեմբեր 1922-ին Տէր Օհանեանի կինը՝ Արմէն Օհանեան, վերստին ամուսնացած է մեքսիքացի դիւանագէտ, լրագրող ու գրագէտ Մասետոնիօ Կարզայի հետ⁴⁶, հաւանաբար Համպուրկի մէջ, ինչ որ կը նշանակէ, թէ այս կամ այն կերպ, ան վերջապէս յաջողած էր ամուսնալուծման արտօնութիւն ստանալ Հայց. եկեղեցիէն՝ երկար տարիներու բաժանումէ ետք։

Զօրեան, Զաքարեան եւ Տէր Օհանեան գործնապէս չեն մասնակցած «Նեմեսիս»-ի պերլինեան յաջորդ հանգրուանին՝ Արշաւիր Շիրակեանի եւ Արամ Երկանեանի արդարահատոյց գործունէութեան, թէեւ Յակոբ Զօրեան օժանդակած է Շիրակեանին՝ Պերլինէն մեկնելու⁴⁷։ 1920-1925-ին Պերլինի համալսարանը ուսանելէ եւ իր դոկտորական աւարտաճառը ներկայացնելէ ետք, Զօրեան Երեւանի համալսարանէն հրաւեր ստացած ու մեկնած է Խորհրդային Հայաստան, իսկ Վահան Զաքարեան ու Հայկ Տէր Օհանեան Գերմանիա մնացած են մինչեւ իրենց կեանքին վերջը։

1921-1931 տասնամեակին որեւէ տեղեկութիւն յայտնի չէ Տէր Օհանեանի մասին։ Կ'ենթադրենք, որ դուստրը՝ Նորան, այս ժամանակաշրջանին պէտք է միացած ըլլար անոր։ Արդարեւ, Իսահակեան, որ նախորդ տարին Հայաստանէն Փարիզ վերադարձած էր, 7 Հոկտեմբեր 1931-ին գրած է Զաքարեանին. «Գրում եմ իմանալու համար սիրելի Հայկի մասին, ի՞նչ է անում, տրամադրութիւն, առողջութիւն, վիճակ։ Ինչպէ՞ս է նրա աղջկայ՝ Նորայի վիճակը, առողջութիւնը։ Ի՞նչ է անում Գրենֆիլդը, վիճակը, եւ այլն։ Շա՛տ կը խնդրեմ բարեւես Հայկին եւ Գրենֆիլդին»⁴⁸։ Վերջին նամակով՝ 6 Յունիս 1934-ին, դարձեալ կը ղրկէր «շա՛տ բարեւներ Հայկին»⁴⁹։ Տէր Օհանեանը, ըստ Կարօ Գէորգեանի տեղեկութեան, Իրան մեկնած էր 1930-ականներուն եւ վերադարձած Պերլին 1935-ին⁵⁰։

⁴⁵ ԳԱԹ, Աւետիք Իսահակեանի ֆոնտ, I բաժին, ք. 227 (հմմտ. Իսահակեան, *Երկերի ժողովածու*, էջ 182)։

⁴⁶ «Certificado de nacionalidad mexicana No. 899 expedido a favor de Armen S. P. de Garza,» Ministerio de Relaciones Exteriores, Mexico, Exp. VII/521.5/70535: Շնորհակալ եմք մեխիքահայ հետազօտող Գարօս Անթառամեանին, որ մեր տրամադրութեան տակ դրած է մեխիքական արխիւներու փաստաթուղթերը։

⁴⁷ Շիրակեան, *Կտակն էր նահատակներուն*, էջ 308-315, որ անունը յիշած է սոսկ «Զօրեան» ձեւով, պէտք է ենթադրել՝ ապահովութեան նկատառումներով։

⁴⁸ ԳԱԹ, Ա. Իսահակեանի ֆոնտ, I բաժին, ք. 228: Տե՛ս նաեւ Իսահակեան, *Երկերի ժողովածու*, էջ 287։

⁴⁹ ԳԱԹ, Ա. Իսահակեանի ֆոնտ, I բաժին, ք. 230: Տե՛ս նաեւ Իսահակեան, *Երկերի ժողովածու*, էջ 314։

⁵⁰ «Հոդվւմիք», էջ 590։

1934-ին Արմէն Օհանեանն ու իր ամուսինը հաստատուած են Մեքսիքօ, իսկ 1935-ին Նորա Տէր Օհանեան հետեւած է մօրը քայլերուն⁵¹: Հոն ամուսնացած է ու մահացած՝ 1967-էն ետք⁵²: Ա. Օհանեան մահացած է 89 տարեկան հասակին՝ 1976-ին⁵³:

Հայկ Տէր Օհանեան մասնակցած է Գերմանա-Հայկական Ընկերութեան վերջին ժողովին՝ Բ. Աշխարհամարտէն առաջ, 10 Հոկտեմբեր 1938-ին⁵⁴, իսկ 1941-ին Հայտըլպերկ փոխադրուած է⁵⁵:

Տէր Օհանեան տարիներով ուսումնասիրած է հայ ազատագրական շարժման ռազմիրաներէն Իսրայէլ Օրիի կեանքն ու գործունէութիւնը: Յարգ յայտնի առաջին վկայութիւնը կու գայ Սիմոն Վրացեանէն, որ 8 Մարտ 1950-ին, ի պատասխան Կոստան Զարեանի դիմումին՝ նիւթերու մասին, Պոստոնէն գրած է. «Ձեմ իմանում յատկապէս ի՞նչն է հետաքրքրում քեզ, որ ըստ այնմ գրեմ: Իսրայէլ Օրիով, տարիներից ի վեր, զբաղւում է Հայկ Օհանեանը (Բերլինից). ունի Օրիի մասին ամբողջ գրականութիւնը՝ նաեւ վաւերագրային նոր գիւտեր է արել: Եթէ նրան գրես, վստահ եմ, որ ըստ ամենայնի կը գոհացնի քեզ»: Ու անմիջապէս աւելցուցած է Տէր Օհանեանի (որ, ըստ երեւոյթին, այս շրջանին արդէն կրճատած էր «Տէր»-ը) Հայտըլպերկի հասցէն⁵⁶: Շաբաթ մը ետք Իսկիայէն (Իտալիա) գրած իր պատասխանին մէջ, Զարեան պարզած է, որ Վրացեանի Սեպտեմբեր-Հոկտեմբեր 1949-ի յօդուածները կարդալէ ետք «Հայրենիք» օրաթերթին մէջ, «մէջս նորից որդը սկսեց ուտել, թէ ի՞նչ լաւ կը լինէր մի մեծ վէպ գրել նրա մասին», եւ առ այդ գրած էր տարբեր անձերուն նիւթ ուղեւոր: Սակայն, այնուհետեւ իր ծրագրէն հրաժարած էր, մտածելով, թէ «գա ի՞նչ բախտ է. ոչ միայն գրականութիւնը հայ գրագէտին չի կերակրում, այլ դեռ պէտք է հարուստ լինել, որպէս զի հայ գրականութիւնով մարդ զբաղւի»⁵⁷, թէեւ շարունակած է զայն հետապնդել քանի մը ամիս ետք⁵⁸: 1954-ին Փարիզի «Յառաջ»

⁵¹ Archivo General de la Nación de México (AGN), Registro Nacional de Extranjeros (RNE), Sección "Persia", Box 1.

⁵² Վերջին յայտնի փաստաթղթային հետքը Ապրիլ 1967-ին կը վերաբերի (Nora Ter-Ohanian, archivo de migración 4-355-1-1935-93652, Archivosdel Instituto Nacional de Migración, Ciudad de México):

⁵³ Բախտիար Յովակիմեան, «Օհանեան, Արմէն», Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 12, եր., 1986, էջ 537:

⁵⁴ Friedrich Heyer, "Zur Wiederbegründung der Deutsch-Armenische Gessellschaft", Kirche im Osten, 21/22, 1978-79, p. 321.

⁵⁵ «Հոդվումի», էջ 590:

⁵⁶ Վարդան Մատթէոսեան, «Կոստան Զարեանի եւ Սիմոն Վրացեանի նամակագրութենէն», Հայկազեան Հայագիտական Հանդէս, հատոր ԻԹ., 2009, էջ 318:

⁵⁷ Նոյն տեղը, էջ 319:

⁵⁸ Վարդան Մատթէոսեան, «Բեզլար Նաւասարդեանի եւ Կոստան Զարեանի նամակները», Բազմավէպ, 2007, էջ 366-368:

օրաթերթին մէջ լոյս տեսած թղթակցութիւն մը կը յայտնէր, թէ Տէր Օհանեան, հակառակ իր տարիքին, կը շարունակէր գործօն մնալ եւ մասամբ յաղթահարած էր նախորդ տարիներու տնտեսական դժուարութիւնները: Իսրայէլ Օրիի կողքին, ան կազմած էր հայ ժողովուրդի ու մշակոյթի մասին գերմանական տեղեկութիւններու եւ տեսակէտներու հաւաքածոյ մը՝ 3.000 մեքենագիր էջերով⁵⁹:

Յետ երկարատեւ հիւանդութեան, Հայկ Տէր Օհանեան իր մահկանացուն կը կնքէր Հայտէլպէրկի մէջ, 27 Հոկտեմբեր 1957-ին, 73 տարեկանին: Թաղման ներկայ եղած են Շիւթկարտէն եւ Հայտէլպէրկէն հայեր, նաեւ ուսանողներ եւ գերմանացի անձնաւորութիւններ⁶⁰: Բնակարանը նոտարի կողմէ կնքուած էր եւ յայտնի չէ, թէ ի՞նչ եղած է իր գրադարանին եւ թուղթերուն ճակատագիրը, զորս ան փափաքած էր նուիրել Դաշնակցութեան թանգարանին Փարիզ⁶¹: Ֆինանսական վիճակը թոյլ չէր տուած հրատարակել գերմաներէն մենագրութիւնը Իսրայէլ Օրիի մասին, որուն ձեռագիրը, ըստ երեւոյթին, ուղարկուած է աղջկան՝ Մեքսիքո⁶²:

Մահուան նախորդող տարիներուն՝ 1953-ին եւ 1956-ին, Թեհրեանի յուշերը երկու անգամ հրատարակուած էին: Այսպիսով, Թալէաթի ահաբեկումէն երեք տասնամեակ ետք, Հայկոյի անունը կը բացայայտուէր: Բայց բուն ինքնութեան բացայայտումը պիտի սպասէր մինչեւ այսօր:

Հ. Տէր Օհանեանի վերաբերող կցկտուր տեղեկութիւնները մէկտեղուած են շնորհիւ թերթերէ եւ գիրքերէ պեղուած պատահական գիւտերու: Պէտք է յուսալ, որ անոր կենսագրութիւնը ամբողջացնող նիւթեր յայտնաբերուին Հ. Յ. Դաշնակցութեան եւ Հայաստանի առաջին Հանրապետութեան Պոստոնի արխիւներուն մէջ, երբ բարեբաստիկ օր մը լիովին տրամադրելի ըլլան հետազօտողներու:

Vardan Matteosean

“HAIKO”, The Last Unknown Participant of Talaat’s Liquidation

In his memoirs published in 1953, Soghomon Tehlirian disclosed the details of the assassination of Talaat Pasha, the mastermind of the Armenian genocide, which he had carried in March 1921. For security reasons, he introduced his immediate collaborators in Berlin with pseudonyms:

⁵⁹ Տոբ. Տ. Յրումեան, «Երկու կարեւոր աշխատանքներ», Յառաջ, 9 Յունուար, 1954:

⁶⁰ Փափազեան, «Բժ. Հայկ Տէր Օհանեան»:

⁶¹ «Հայկ Օհանեան»: Ըստ Հ. Յ. Դաշնակցութեան թանգարանի պատասխանատու Անոյշ Ամսէեանի հաղորդումին, այժմ Երեւան փոխադրուած թանգարանը Հ. Տէր Օհանեանի վերաբերող ոչինչ ունի:

⁶² «Հոդվրաի», էջ 590:

Hrap, Hazor, Vaza, Haiko. While the name of the first, Hrach Papazian (1892-1960), was already disclosed in Arshavir Shiragian's memoirs (1965), the actual identities of Hazor (Hakob Zorian, 1894-1942, a Soviet Armenian historian, victim of the Stalinist purges) and Vaza (Vahan Zakarian, 1883-1980, one of the translators during Tehlirian's trial) were revealed two decades later. However, Haiko's name has been ignored by most researchers and there has been no attempt to identify him.

The article introduces evidence to solve this minor enigma and identifies Haiko as Haik Ter Ohanian (1883-1957), an A.R.F. member and political activist who was a medical student and a staff member of the diplomatic representation of the Republic of Armenia in Berlin at the time of Talaat's liquidation. On the basis of available information collected from the periodical press, letters, and secondary literature, the article outlines Ter Ohanian's life and activities from Iran to the Caucasus to Germany.